ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ–ԾՐԱԳԻՐ 1

ՎԱՐԿ ԹԻՎ 2561-ARM(COL)

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 3
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10
ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 11
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11
ՀԱՎԵԼՎԱԾ 1. SOE ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ 19
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ 20

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ*

Կառավարման խորհրդի նախագահ

Կարեն Կարապետյան	ՀՀ վարչապետ

Կառավարման խորհրդի անդամներ

Վաչե Գաբրիելյան	ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարփոխումների նախարար
Վարդան Արամյան	ՀՀ ֆինանսների նախարար
Սուրեն Կարայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
Աշոտ Մանուկյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար
Վահան Մարտիրոսյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար
Տարոն Մարգարյան	Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Կամո Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Գագիկ Գրիգորյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ
Գարեգին Մելքոնյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ
Վահե Նիկոյան	Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Ներսես Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Աշոտ Մուսայան	ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Նորա Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, ծրագրերի ղեկավար (համաձայնությամբ)

(*) Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Կառավարման խորհրդի կազմը գտնվում է փոփոխման և վերահաստատման փուլում:

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է "Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության (Կազմակերպություն) ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև կնքված 2561-ARM(COL) վարկային համաձայնագրով ֆինանսավորվող և Կազմակերպության կողմից իրականացվող "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 1"-ի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը, վարկային միջոցների մասհանման հաշվետվությունը, ընթացիկ հաշվի հաշվետվությունը, ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք):
2. Ծախսերը բոլոր էական առումներով կատարվել են և ընթացիկ հաշիվը օգտագործվել է՝ համաձայն Վարկային Համաձայնագրում նշված նպատակներին և Ասիական Զարգացման Բանկի կողմից 2007թ. հունվարին հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համապատասխան:
3. SOE ընթացակարգով փոխհատուցումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, դրամական միջոցների ստացման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված *"ՀՀՀՀՄՄ-դրամային միջոցների սկզբունք"* ստանդարտի և Ասիական Զարգացման Բանկի կողմից 2007թ. հունվարին հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման

ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
29 հունիսի, 2017թ.

Սաթվել Վարդանյան
Տնօրեն

Գևել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM(COL)
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	ծնթ.	Հաշվետու տարի 2016թ. USD	Կուտակային առ 31.12.2016թ. USD
Ֆինանսավորում			
ԱԶԲ 2561-ARM(COL) վարկի ֆինանսավորում	3.1	-	57,038,940
ԱԶԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում	3.2	2,996,620	2,996,620
Հայաստանի Հանրապետության ֆինանսավորում		3,293,710	12,555,814
Ընդամենը ֆինանսավորում		6,290,330	72,591,374
Ծախսումներ	5		
Աշխատանքներ		2,996,620	53,614,621
Խորհրդատվական ծառայություններ		-	3,630,796
Ապրանքներ		-	-
Ծրագրի կառավարման աջակցություն		-	1,897,628
Տոկոսագումար		-	916,213
Հարկեր, տուրքեր		3,293,599	12,516,762
Ընդամենը ծախսումներ		6,290,219	72,576,020
Այլ մուտքեր/(ելքեր)	6	(676)	(1,846)
Փոխարժեքային կորուստ		(9,429)	(12,964)
Դրամական միջոցների զուտ աճ		(9,994)	544
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ		10,538	-
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	4	544	544

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2017թ հունիսի 29-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Վարդան Կարապետյան
Գլխավոր տնօրենի Ժ/Պ

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման մասնագետ

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM(COL)
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հիմնական բաղադրիչներ	Ծախսումներ		Ֆինանսավորման աղբյուրը			Ֆինանսավորման աղբյուրը		
	Ընդամենը		ԱԶԲ 2561-ARM(COL) վարկ	ՀՀ ֆինանսավորում	ԱԶԲ 2729-ARM վարկ	ԱԶԲ 2561-ARM(COL) վարկ	ՀՀ ֆինանսավորում	ԱԶԲ 2729-ARM վարկ
	Հաշվետու տարի 2016թ.	Կուտակային առ 31.12.2016թ.	Հաշվետու տարի 2016թ.			Կուտակային առ 31.12.2016թ.		
Երևան-Աշտարակ քառաշարք ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցում և/կամ վերականգնում	2,302,011	23,895,106	-	1,148,798	1,153,213	18,707,608	4,034,285	1,153,213
Երևան-Արարատ քառաշարք ճանապարհի անվտանգության բարձրացում	3,972,137	41,142,864	-	2,128,730	1,843,407	31,884,849	7,414,608	1,843,407
Օժանդակում ծրագրի կառավարմանը, ներառյալ Ներդրումային ծրագրի ներքո հետագա ծրագրերի մանրամասն նախագծի առաջարկվող ֆինանսավորումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը և մրցույթի փաստաթղթերի և գնումների պատրաստումը	16,071	6,621,837	-	16,071	-	5,528,424	1,093,413	-
Տոկոսագումար	-	916,213	-	-	-	916,213	-	-
Ընդամենը	6,290,219	72,576,020	-	3,293,599	2,996,620	57,037,094	12,542,306	2,996,620

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM(COL)
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ծախսային հոդվածներ				Կանխա-վճար	Ընդամենը
	Շինարարական աշխատանքներ	Խորհրդա տվական ծառայու թյուններ	Ծրագրի կառավարման աջակցություն	Տոկոսա գումար		
	1	2	4	5		
48	-	6,166	278,297	-	(284,463)	-
	-	6,166	278,297	-	(284,463)	-

Արժույթ	USD
Բանկի հաշվեհամար	900000900028
Բանկ	ՀՀ Գանձապետարան Մելիք Աղամյան 1, Երևան,
Բանկի հասցե	Հայաստանի Հանրապետություն

	ԱԶԲ 2561-ARM(COL) վարկ USD
Տարեսկզբի մնացորդը առ 01.01.2016թ.	-
Տարեսկզբի տարբերություն*	(1,846)
ԱԶԲ ֆոնդի կանխավճար/համալրում	-
Ընդունելի վճարումներ	-
Տարեվերջի մնացորդը առ 31.12.2016	-
Տարեվերջի տարբերություն*	(1,846)

(*) Տարբերությունը իրենից ներկայացնում է.

	31.12.2016թ. USD	01.01.2016թ. USD
Այլ ֆոնդին ժամանակավոր տրամադրված գումար (ծնթ. 6)	1,846	1,846
	1,846	1,846

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM(COL)
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հոդվածներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու տարի	Ամողական արդ	Հաշվետու տարի	Ամողական արդ	Հաշվետու տարի	Ամողական արդ
	2016թ.	31.12.2016թ.	2016թ.	31.12.2016թ.	2016թ.	31.12.2016թ.
Աշխատանքներ	2,996,620	53,614,621	438,905	51,014,106	2,557,715	2,600,515
Խորհրդատվական ծառայություններ	-	3,630,796	-	3,673,596	-	(42,800)
Ապրանքներ	-	-	-	-	-	-
Ծրագրի կառավարման աջակցություն	-	1,897,628	14,201	1,911,829	(14,201)	(14,201)
Տոկոսագումար	-	916,213	-	916,213	-	-
Այլ (հարկեր)	3,293,599	12,516,762	3,392,324	12,615,487	(98,725)	(98,725)
Ընդամենը	**6,290,219**	**72,576,020**	**3,845,430**	**70,131,231**	**2,444,789**	**2,444,789**

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված Շրջանակային ֆինանսավորման համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել բազմափուլ (բազմատրանշային) վարկավորում՝ 500 միլիոն դոլար ընդհանուր գումարով:
ԱԶԲ-ն Բազմափուլ Ֆինանսական Գործիքի (ԲՖԳ) ներքո վարկերը տրամադրում է ըստ առանձին ծրագրերի՝ տրանշների, երբ վերջիններս պատրաստ կլինեն ֆինանսավորման համար՝ համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման դեպքում: Յուրաքանչյուր վարկ հանդիսանում է առանձին տրանշ: Տրանշները կարող են ունենալ տարբերվող ֆինանսավորման պայմաններ, տրամադրվել միաժամանակ կամ հաջորդաբար:

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2009թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1 (հատուկ գործողություններ)" (այսուհետև՝ Ծրագիր) վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 38,443,000 SDR (Հատուկ Փոխարկման Իրավունք) գումարով 2561-ARM(COL) վարկը:
Վարկի տրամադրման թարմացված վերջնաժամկետ է սահմանվել 2017թ. հունիսի 30-ը:
Մինչ վերջնաժամկետը կատարված ծախսերի գծով (մասնավորապես՝ շինարարությունների գծով հետերաշխիքային գումարներ) պարտավորությունների մարման ժամկետը սահմանվել է 31.10.2017թ.-ը:

Համաձայն ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ԱԶԲ-ի միջև 17.06.2016թ. նամակ-համաձայնագրի, կատարվել է ԱԶԲ 2729-ARM վարկային միջոցների վերաբաշխում, ինչի արդյունքում 6,000,000 ԱՄՆ դոլար հատկացվել Ծրագրի իրականացմանը:

Համաֆինանսավորումը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

1.2. Ծրագրի նպատակները

2561-ARM(COL) վարկային համաձայնագրով իրականացվող Ծրագրի նպատակներն են.

- Երևան-Աշտարակ քառաշարք ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցում,
- Երևան-Արարատ քառաշարք ճանապարհի անվտանգության բարձրացում,
- օժանդակում ծրագրի կառավարմանը, ներառյալ Ներդրումային ծրագրի ներքո հետագա ծրագրերի մանրամասն նախագծի առաջարկվող ֆինանսավորումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը և մրցույթի փաստաթղթերի և գնումների պատրաստումը,
- տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տրամադրում:

1.4. Ծրագիրն իրականացնող հաստատություն

Ծրագիրը իրականացվում էր "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. մարտի 11–ի N 446–Ն որոշումով:

ՀՀ Կառավարության 15.12.2016թ. թիվ 1304-Ա որոշման համաձայն՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը 2017թ. մարտի 1-ին միացման ճանապարհով վերակազմակերպվել է «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի (Կազմակերպություն):
Կազմակերպությունը հանդիսանում է «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկի և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:
Կազմակերպության հիմնական նպատակն է ՀՀ-ում տրանսպորտի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը, ներառյալ՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի աշխատանքների իրականացումը:

Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն է:

Կազմակերպության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Նալբանդյան փողոց 28, գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Տիգրան Մեծի փողոց, 4:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամական միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի համաձայն և ներկայացված են Ասիական Զարգացման Բանկի 2007թ. հունվարին հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկ"-ին (լրամշակված) համապատասխան:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվություն,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվություն,
- վարկային միջոցների առհանման հաշվետվություն,
- ընթացիկ հաշվի հաշվետվություն,
- ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվություն,
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ՝ ներառող.
    - հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը,
    - SOE ընթացակարգով փոխհատուցումները,
    - այլ ծանոթագրություններ:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամական միջոցների հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամական միջոցների հիմունքը:
Հաշվապահական հաշվառման դրամական միջոցների հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամական միջոցների հիմունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3 Ներկայացման արժույթը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը դա Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են և գործարքները իրականացվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության հատկացումները և դրանց հաշվին կատարված ծախսումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ կիրառելով վճարման նախորդ օրվա դրությամբ սահմանված արտարժույթի փոխարկման փոխարժեքը,
- ՀՀ դրամով արտահայտված Ասիական Զարգացման Բանկի ֆինանսավորման հաշվին իրականացվող վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ կիրառելով վճարման նախորդ օրվա դրությամբ սահմանված արտարժույթի փոխարկման փոխարժեքը:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 483.94 դրամ (31.12.2015՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ):

2.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.6 Ծրագրի ֆինանսավորում

Ծրագրի ֆինանսավորումը ԱԶԲ 2561-ARM(COL) վարկի միջոցներից՝ 38,443,000 SDR ընդհանուր գումարով, կատարվում է 100% չափով վարկային համաձայնագրով սահմանված բոլոր ծախսային հոդվածների նկատմամբ:

Վարկային միջոցներից Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներով պահանջվող հարկեր և տուրքեր չեն վճարվում: Վերջիններս կատարվում են Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորման հաշվին:

2.7 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Ֆինանսավորում

3.1. ԱՋԲ 2561-ARM (COL) վարկի ֆինանսավորում

	Հաշվետու տարի 2016թ. USD	Ամողական առ 31.12.2016թ. USD
Փոխհատուցում-SOE ընթացակարգ	278,297	2,024,290
Փոխհատուցում-Summary Sheet ընթացակարգ	6,166	1,925,266
Ուղղակի վճարում	-	52,173,171
Տոկոսագումարի առհանում	-	916,213
Կանխավճար/Փոխհատուցում	(284,463)	-
Ընդամենը	-	**57,038,940**

3.2 ԱՋԲ 2729-ARM վարկի վերաբաշխված միջոցներից ֆինանսավորում

	Հաշվետու տարի 2016թ. USD	Ամողական առ 31.12.2016թ. USD
Ուղղակի վճարում	2,996,620	2,996,620
Ընդամենը	**2,996,620**	**2,996,620**

4. Դրամական միջոցներ

Ընթացիկ հաշիվ	31.12.2016թ. USD	31.12.2015թ. USD
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		
ՀՀ Գանձապետարանում (ՀՀ դրամ)*	544	10,538
	544	*10,538*
Ընդամենը	544	10,538

(*) ՀՀ Կառավարության համաֆինանսավորման գծով մնացորդը վերադարձվել է պետական բյուջե 2017թ.-ին :

5. Բյուջեի կատարում

Ծախսային հոդվածներ	31.12.2016թ. դրությամբ USD	Բյուջե USD	Կատարում %
Աշխատանքներ	53,614,621	56,603,569	95
Խորհրդատվական ծառայություններ	3,630,796	3,657,044	99
Ապրանքներ	-	-	-
Ծրագրի կառավարման աջակցություն	1,897,628	1,944,382	98
Տոկոսագումար	916,213	916,213	100
Այլ (ներառյալ տեղական հարկերը)	12,516,762	10,000,000	125
Ընդամենը	**72,576,020**	**73,121,209**	99

6. Այլ մուտքեր/(ելքեր)

	31.12.2016թ. դրությամբ USD
Տրանշ 2-ին ժամանակավորապես տրամադրված գումար	(1,846)
	(1,846)

7. Կանխավճարներ և կրեդիտորական պարտքեր

Տեղեկատվության նպատակով ներքո ներկայացվում է հաշվետու ամսաթվի դրությամբ չմարված կանխավճարները և կրեդիտորական պարտքերը:

Կանխավճարներ	31.12.2016թ. USD	31.12.2015թ. USD
Շինարարական աշխատանքների գծով (ա)	-	13,391,023
Խորհրդատվության գծով (ա)	-	55,500
Ընդամենը	-	13,446,523

Կրեդիտորական պարտքեր	31.12.2016թ. USD	31.12.2015թ. USD
Շինարարական աշխատանքների գծով (բ)	-	489,000
Հետեղաշխիքային գումարներ (գ)	3,378,402	5,020,926
Խորհրդատվության գծով	11,303	-
Ընդամենը	3,389,705	5,509,926

(ա) Հաշվետու ամսաթվի դրությամբ տրված կանխավճարները ամբողջությամբ մարվել են:

(բ) Հաշվետու ամսաթվի դրությամբ շինարական աշխատանքների գծով կրեդիտորական պարտքերը ամբողջությամբ մարվել են:

(գ) Հետերաշխիքային գումարները պահվում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 10%-ի չափով, որից 5%-ը ենթակա է վճարման շինարարական աշխատանքի ընդունման վկայագրի հաստատումից հետո, իսկ մնացած 5%-ը՝ վկայագրի ընդունումից մեկ տարի հետո: Վկայագիրը հաստատվել է 2016թ.-ի հունիսին, որով մարվել է հետերաշխիքային գումարների 5%-ը, իսկ հաշվետու ամսթվով առկա ողջ մնացորդի մարումը կկատարվի մինչև 2017թ.-ի սեպտեմբեր ամիսը, հաշվի առնելով առաջացած որոշ աշխատանքների շտկման անհրաժեշտությունը:

8. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ Ծրագրի դեմ ներկայացված դատական հայցեր չկան:

Դիմումի համար	Ծախսային հոդվածներ	Ընդամենը
	Ծրագրի կառավարման աջակցություն	
	4	
48	278,297	278,297
	278,297	278,297

Նկարագրություն	Վճարված գումար	Պայմանագրի անվանում
Շինարարական աշխատանքներ		
Տրանշ 1 հատվածի շինարարական աշխատանքներ	181,284	T1-T2- CW-01
Տրանշ 1 հատվածի երաշխիքային գումարի 5%-ի վերադարձ	2,815,336	T1-T2- CW-01
Ընդամենը շինարարական աշխատանքներ	**2,996,620**	
Հարկեր, տուրքեր.		
Տրանշ 1 հատվածի շինարարական աշխատանքների գծով	3,277,528	
Ենթագումար	**3,277,528**	
Խորհրդատվական ծառայությունների գծով		
Տեխնիկական առաջադրանքով նախատեսված ծառայությունների կատարման համար	13,804	No 02-CS-002
Աուդիտորական ծառայությունների համար	2,266	No IC004
Ենթագումար	***16,071***	
Ընդամենը հարկեր, տուրքեր	**3,293,599**	
Ընդամենը Ծախսումներ	**6,290,219**	